

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի խորհրդի 2011 թվականի
դեկտեմբերի 20-ի
թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի նախագահ՝

----- Արթուր Զավադյան

2011 թվականի դեկտեմբերի ____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարի՝ 2011 թվականի դեկտեմբերի
____-ի

թիվ ____ -Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

----- Վաչե Գաբրիելյան

2011 թվականի դեկտեմբերի ____

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ձև 5)**

2016թ. III–րդ եռամսյակ

Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2001 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն Ընկերությունը 2008 թվականի հունիսի 27-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից վերագրանցվել և վերալիցենզավորվել է թիվ 5 արտոնագրային համարով՝ որպես ներդրումային ընկերություն:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16 շենքի թիվ 47 տարածք:

Ընկերության հիմնական գործառնություններն են.

- 1) Ներդրումային գործունեությունը.
 - ՀՀ պետական և ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի առք և վաճառք,
 - բրոքերային գործառնություններ արժեթղթերով,
 - դիլերային թողարկում (անդերռայթինգ),
- 2) արտարժույթի առք և վաճառքը:

Ընկերությունը համագործակցում է ՀՀ ԿԲ-ի, ՀՀ առևտրային բանկերի, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, ինչպես նաև հանդիսանում է «ՆԱՍԳԱԲ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ:

Ընկերությունը ներկայացուցչություններ և մասնաճյուղեր չունի և որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ընդհանուր ժողով), Ընկերության խորհուրդը (Խորհուրդ), Ընկերության Գործադիր տնօրենը (Տնօրեն):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի գումարել բաժնետերերի հերթական տարեկան ընդհանուր ժողով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Ընկերության խորհուրդը կազմված է երեք անդամից, որոնց լիազորությունների ընդհանուր տևողությունը սահմանափակված չէ:

Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գործադիր տնօրենը: Ընկերության գործադիր տնօրենն է Վաղինակ Սարոյանը: Ընկերության ղեկավարները վարձատրվում են համաձայն իրենց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի՝ ամսական դրույքաչափով:

Համաձայն Ընկերության կանոնադրության, Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,000,000 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 20,000 (տասնյոթ հազար) սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության բաժնետերերին: 2016թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերությունն ունի 2 բաժնետեր.

1. Էդուարդ Սարոյան՝ 50% մասնաբաժնով
2. Արայիկ Կարապետյան՝ 50% մասնաբաժնով

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարց:

Ընկերության 2015թ-ի ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվել է համաձայն վերջինիս հետ կնքված համապատասխան պայմանագրի: Վճարման չափը հաստատվել է Ընկերության խորհրդի կողմից:

Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, Ֆինանսական Հաշվետվությունների Սիջազգային Ստանդարտների, Ընկերության խորհրդի կողմից հաստատված «Հաշվապահական հաշվառման քաղաքականության» և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերով սահմանված պահանջների և ցուցումների:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, ինչպես նախատեսված է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ, ներառում է.

1. համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,
2. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
3. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
4. դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունը,
5. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության, պատրաստում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա:

Ընկերությունը հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար օգտագործում է անընդհատության, արժանահավատության, հաշվեգրման, հասկանալիության, էականության և միասնականության, համադրելիության, սահմանազատման և հետևողականության սկզբունքները:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ընկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում,

ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով՝ օրական կտրվածքով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման սկզբունքով՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները: Ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր օր:

Ընկերությունը աշխատակիցների արձակուրդների գալիք վճարման գծով ձևավորում է պարտավորություն՝ յուրաքանչյուր օր հատկացումներ կատարելու միջոցով:

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Ընկերությունն իրականացնում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով արտահայտված գործառնություններ: Ընկերությունը, օրենքով սահմանված կարգով, հաշվապահական հաշվառումը վարում է, ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արժույթով, որն էլ հանդիսանում է հաշվետվական արժույթ: Արտարժույթով արտահայտված գործառնություններն Ընկերությունը սկզբնապես գրանցում է հաշվետվական արժույթով՝ կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի նկատմամբ հրապարակված միջին հաշվարկային փոխարժեքը:

Սկզբնական ճանաչումից հետո արտարժույթով հողվածները ենթարկվում են վերագնահատման: Ընդ որում, դրամային հողվածները ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվարկային փոխարժեքով, իսկ ոչ դրամային հողվածները՝ գործարքի օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվարկային փոխարժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30.09.2016	31.12.2015	30.09.2015
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	474,46	483,75	473,71

Հարկեր

Ընկերությունում շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի, գույքահարկի, հողի հարկի գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Հաշվետու եռամսյակի շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից համաձայն՝ յուրաքանչյուր օրվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորություն շահույթի նկատմամբ և հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են: Ընկերությունը հետաձգված հարկերը հաշվարկում է ամսական կտրվածքով:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված

փոխհատուցման իրական արժեքը՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված և հաշվապահական հաշվառման ստանդարտներով սահմանված ծախսումներ:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում հաշիվների մնացորդներից:

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

Արժեթղթեր, որոնք ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիվերալիս հավելագների (մարժանների) կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով: Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Համապատասխան իրացված և չիրացված բոլոր օգուտներն ու վնասները գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի արժեթղթեր

Ներդրումներ պարտքային և կապիտալ գործիքներում, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից առաջացած չիրացված շահույթն ու վնասը արտացոլվում են կապիտալում: Նշված արժեթղթերի վաճառքի դեպքում իրական արժեքի գծով ճշգրտումները ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ գեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Սովորաբար կապիտալ գործիքները չեն գնանշվում որևէ բորսայում և ունեն սահմանափակ շուկա: Այդ գործիքների իրական արժեքը ճշգրտորեն որոշելու համար բացակայում են որոշակի ընդունելի սկզբունքներ ու մեթոդներ, և, հետևաբար, այդ արժեթղթերը հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեգրկման գծով պահուստի գումարը:

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

Ֆիքսված մարման ժամկետով պարտքային արժեթղթեր, որոնք Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև այդ ներդրումների մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվի էական ծավալի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվ: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ռեալ համաձայնագրերով գործառնություններ

Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը Ընկերությունը շարունակում են հաշվառվել իր հաշվեկշռում՝ իրականացնելով նրանց նկատմամբ և՛ տոկոսների հաշվեգրում, և՛ իրական արժեքի ճշտում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապահին դրամական միջոցներ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք

բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված միջին փոխարժեքով և հետագայում փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Հիմնական միջոցների միավորի մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Ընկերությունը հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները կատարում է հետևյալ սահմանված ժամկետներում.

Հիմնական միջոցի անվանումը	Ժամկետ	Տոկոսադրույք %
Համակարգիչներ և կապի միջոցներ	3 տարի	33.3
Տրանսպորտային միջոցներ	5 տարի	20
Գույք, գրասենյակային սարքավորումներ	5 տարի	20
Այլ հիմնական միջոցներ	5 տարի	20

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերության հաշվեկշռում հաշվառվում է ձեռք բերման արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է հաշվեկշռային արժեքով՝ սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Փոխանակման փոխարժեքը որոշվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից՝ ֆինանսական շուկայում տիրող ամենօրյա իրավիճակի ուսումնասիրության հիման վրա:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	54	46,444
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	833,136	641,156
Տոկոսային եկամուտներ փոխառություններից	61,701	51,547
Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից		
Տոկոսային եկամուտներ սվոպից		31,581
Այլ տոկոսային եկամուտներ		
Ընդամենը	894,891	770,728

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(18,955)	(54,937)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(538,607)	(615,742)
Տոկոսային ծախսեր սվոպի գծով	(676)	
Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց		
Այլ տոկոսային ծախսեր		
Ընդամենը	(558,238)	(670,679)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	336,653	100,049

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից		
Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	35	1,316
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից		
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից		
Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից		
Պահառության գործունեությունից		
Այլ միջնորդավճարներ		
Ընդամենը	35	1,316

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Միջնորդավճարների գծով ծախսեր	(725)	(1,804)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	(690)	(488)

Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»

Շահաբաժիններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		
Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		

Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	1,946	(4,748)
Ընդամենը	1,946	(4,748)

Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	53,856	_(2,009)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
Ընդամենը	53,856	(2,009)

Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	559	(1,288)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(14,382)	56,229
Ընդամենը	(13,823)	54,941
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	41,979	48,184

Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»

Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ		
Այլ եկամուտներ	4,153	969
Ընդամենը	4,153	969

Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պահուստի սկզբնական մնացորդ	15		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			

Պահուստի վերջնական մնացորդ			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	Ծա- նոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պահուստի սկզբնական մնացորդ	16		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Պահուստի վերջնական մնացորդ			

Ներդրումների գծով	Ծա- նոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պահուստի սկզբնական մնացորդ	19		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Պահուստի վերջնական մնացորդ			

Այլ ակտիվների գծով	Ծա- նոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պահուստի սկզբնական մնացորդ	23		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Պահուստի վերջնական մնացորդ			

Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

Ընդհանուր վարչական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(30,352)	(30,684)
Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով	(3)	
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր		
Անձնակազմի այլ ծախսեր		
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(4,500)	(4,500)
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(5,383)	(5,704)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(2,125)	(2,105)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(2,142)	(2,093)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(153)	(213)
Տրանսպորտային ծախսեր		
Այլ վարչական ծախսեր	(3,118)	(3,207)
Ընդամենը	(47,776)	(48,506)

2016 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 10 մարդ: Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափն է 296 310 ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հասարակական կապերի գծով ծախսեր	(226)	(224)
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(12,550)	(9,958)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(884)	(816)
Այլ ծախսեր	(648)	(948)
Ընդամենը	(14,308)	(11,946)

Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)»

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից		

Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից		
Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներից		
Այլ դուստր ընկերություններում ներդրումներից		
Ընդամենը		

Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	(67,278)	(6,902)
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները Հետաձգված հարկի գծով ծախս	396	495
Ընդամենը	(66,882)	(6,407)

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետ դրույթաչափ (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	320,011		88,262	
Շահութահարկ՝ դրույթաչափով	64,002	20%	17,652	20%
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով				
Դրական փոխարժեքային տարբերություն	2,880	0.9%	(11,245)	12.7%
Չհարկվող եկամուտներ				
Չնվազեցվող ծախսեր				
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում				
Շահութահարկի գծով ծախս	66,882	20,9%	6,407	7.3%

Ծանոթագրություն 13. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ հարկումից հետո		
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով		
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթ (վնաս)		
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության		

մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին քիվր		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ		

Ծանոթագրություն 14. «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր		
Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ ՀՀ կենտրոնական բանկում		
Դեպոնացված միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում		
Հաշվեգրված տոկոսներ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում		

Ընկերությունը 30.09.2016թ.-ի դրությամբ չունի կանխիկ դրամական միջոցներ:

Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ բանկերում	392,269	150,975
Այլ բանկերում		
Դեպոնացված հաշիվներ բանկերում		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը	392,269	150,975
Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ		
ՀՀ ԿԲ-ում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) պայմանագրեր այլ		
Բանկերում՝ տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) համաձայնագրեր արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում տրամադրված փոխառություններ և ավանդներ ռեպո (հետգնման) համաձայնագրեր		

արժեթղթերի փաթեթի կառավարում այլ		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Չուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	392,269	150,975

2016թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության ընթացիկ հաշիվների ընդհանուր գումարը ՀՀ բանկերում կազմում է 392,269 հազար ՀՀ դրամ, և նրա օգտագործման նկատմամբ որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տրամադրված փոխառություններ, այդ թվում՝ ՀՀ Կառավարությանը ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
արժեթղթերի փաթեթի կառավարում		
այլ	649,460	292,688
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	16,388	35,985
Ընդամենը պահանջներ	665,848	328,673
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Ընդամենը զուտ պահանջներ	665,848	328,673

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաճախորդներին տրամադրված արժեգրված փոխառությունների կառուցվածքը	Հաշվետու ժամանակաշրջան գումարը/քանակը	Նախորդ ժամանակաշրջան գումարը/քանակը
Տրամադրված փոխառություններ, որից		
արժեգրված փոխառություններ, այդ թվում՝ ժամկետանց վերանայված (վերաձևակերպված) վերաֆինանսավորված		
Ընդամենը փոխառություններ		
Հաճախորդներին տրամադրված փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Ընդամենը զուտ փոխառություններ		

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ հաճախորդների	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Բանկեր, այդ թվում՝ տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Այլ ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Պետական կազմակերպություններ, այդ թվում՝ տրամադրված փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ոչ պետական կազմակերպություններ, այդ թվում՝ խոշոր կազմակերպություններ փոքր և միջին կազմակերպություններ	649,460	292,688
Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող Ֆիզիկական անձինք, այդ թվում՝ փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր այլ		
Անհատ ձեռնարկատերեր, այդ թվում՝ փոխառություններ ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
Հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝ տրամադրված փոխառությունների գծով ռեպո (հետգնման) համաձայնագրերի գծով այլ ակտիվների գծով	16,388	35,985
Ընդամենը պահանջներ	665,848	328,673
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Ընդամենը զուտ պահանջներ	665,848	328,673

Ընկերության կողմից տրամադրված փոխառությունները 30.09.2016թ. դրությամբ կազմում են 1,000 հազար ԱՄՆ դոլար (474,460 հազար ՀՀ դրամ), և 31,000 հազար ՀՀ դրամ, որոնք տրամադրվել են «Ռեմշին» ՍՊԸ-ին և 144,000 հազար ՀՀ դրամ, որոնք տրամադրվել են «Վիդիս Դիսքրիբլյուշն» ՍՊԸ-ին: Նշված փոխառությունների տոկոսային հարաբերակցությունը ընդհանուր կապիտալի նկատմամբ կազմում է 33.5%:

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ռեզիդենտության	Հաշվետու ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
ՀՀ ռեզիդենտներ	649,460	97.5%	292,688	89%
ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ				
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ				
Հաշվեգրված տոկոսներ	16,388	2.5%	35,985	11%
Ընդամենը	665,848	100%	328,673	100%

Ծանոթագրություն 17. «Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝ զանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
ԲԲԲ- (Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ զանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
ԲԲԲ- (Բաա3) -ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր զանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
Ընդամենը պետական արժեթղթեր		

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>
Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ՀՀ ոչ պետական արժեթղթեր				

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>
Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ				

այլ Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ երկրների ոչ պետական արժեթղթեր				
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր				
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ Տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող վարկառուների ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող փոխառուների տրամադրված փոխառություններ Այլ				
Ածանցյալ գործիքներ ֆյուչերս ֆորվարդ օպցիոն սվոպ այլ				
Ընդամենը				
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ				

Ծանոթագրություն 18. «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ	9,535,400	7,499,782
ԲԲԲ- /Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
ԲԲԳ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
Ընդամենը պետական արժեթղթեր	9,535,400	7,499,782

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	ցուցակ-ված	չցուցակ-ված	ցուցակ-ված	չցուցակ-ված
Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ-» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ	72,750		212,908	40,142
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	72,750		212,908	40,142

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր

	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>	<i>ցուցակ-ված</i>	<i>չցուցակ-ված</i>
Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ բաժնային գործիքներ այլ				
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր				
Ընդամենը վաճառքի համար մատչելի արժեթղթեր	9,608,150		7,752,832	

Վաճառքի համար մատչելի այլ ֆինանսական ակտիվներ				
տրամադրված փոխառություններ, ֆակտորինգ, դեբիտորական պարտքեր Ա- /Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող վարկառուների ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող վարկառուների փոխառություններ Այլ				
Ընդամենը				

Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	9,608,150	7,752,832
---	------------------	------------------

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերից 9,239,805 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական արժեթղթերը գրավադրվել են ՀՀ ռեզիդենտ բանկերին ռեպո համաձայնագրով, (տես Ծանոթագրություն 23):

Ծանոթագրություն 19. «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր		

այլ ԲԲԲ- /Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
ԲԲ+ /Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը պետական արժեթղթեր		

ՀՀ ոչ պետական արժեթղթեր

	<i><u>ցուցակ- ված</u></i>	<i><u>չցուցակ- ված</u></i>	<i><u>ցուցակ- ված</u></i>	<i><u>չցուցակ- ված</u></i>
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ-» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ				
Հաշվեգրված տոկոսներ				
Ընդամենը				

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր

